ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/1/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի
(Հայտերի բացման նիստի ամփոփման մասին)

ք. Երևան *14.12.2018թ.*
Ժամը՝ 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ռ. Գալստյան*

Անդամներ *Մ.Պետրոսյան*

Ն. Բաղդասարյան

Գ. Քոչարյան

Մ.Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Մ. Պողոսյան*

1.Տեղեկություն՝ ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2019 թվականի կարիքների բավարարման համար **համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցույթի գնային առաջարկներ պարունակող հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում**, ք. Երևան, Աբովյան 9 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2018 թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00-ին:

1.2. http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը

1	ՍԵԳ ՍՊԸ	Երևան, Սարկավագի 72/2, բն.18, seg_tender@mail.ru
2	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	Բագրատունյաց փող., 27/1 շենք, magistral.nakhagits@yahoo.com
3	Մանվել Ջալավյան Ա/Ձ	Երևան ,Մոսկովյան 25, 3/1 տարածք geek.service@yahoo.com
4	Սերվիս պլյուս ՍՊԸ	Երևան, Նալբանդյան 50 service.nalbandyan50@gmail.com
5	Ա/Ձ Անուշ Պետրոսյան	Երևան, Արշակունյաց 5, ga-c@mail.ru

2. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի, «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի, , «Սերվիս պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի ներկայացված փաստաթղթերում միավոր ծառայությունների գնային առաջարկը բացակայում էր:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 «ՍԵԳ» ՍՊԸ-ի, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի, «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի, , «Սերվիս պլյուս» ՍՊԸ-ը ներկայացրել են հրավերով սահմանված բոլոր փոստաթղթերը, գնային առաջարկ, Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի փաստաթղթերում բացակայում է գնային առաջարկի բացվածքը՝ ըստ միավոր ծառայությունների: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի միավորի գնային բացվածքը բացակայում է:

4. Տվյալներ նախահաշվային գնի մասին և յուրաքանչյուր մասնակցի

5.1 Մասնակցի առաջարկված գինը՝

Հ/Բ	Աշխատանքի անվանումը	Կողմոր աշիչ գին՝ նախորդ կնքված պայման գրի գինը	Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը	Մասնակցի անունը
1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	799500	159760	-	159760	Մագիստրալ նախագիծ ՍՊԸ
2	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	799500	160000	-	160000	Մանվել Ջալավյան Ա/Ձ
3	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	799500	194500	-	194500	Ա/Ձ Անուշ Պետրոսյան
4	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	799500	197900	-	197900	Սերվիս պլյուս ՍՊԸ
5	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	799500	320000	64000	384000	ՍԵԳ ՍՊԸ

6.Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

6.1 Հիմք ընդունելով այն փաստը, որ **«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/1/1» ծածկագրով գնման ընթացակարգը իրականցվում է** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, այսինքն նախահաշվային գին սահմանված չէ.

Հանձնաժողովղովը որոշեց.

- ծանուցել մասնակցին՝ 14.12.2018թ. ժամը 10-ին հրավիրելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ գնի շուրջ բանակցելու նպատակով:
- «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին հարցում ուղարկվել՝ մեկօրյա ժամկետում ներկայացնելու գնային առաջարկի բացվածքը ըստ միավոր ծառայության:
- Հանձնաժողովի նիստը շարունակել 14.12.2018թ. ժամը 10-ին:

7. Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

7.1 «Մանվել Ջալավյան» հարցում է ուղարկվել՝ մեկօրյա ժամկետում ներկայացնելու գնային առաջարկի բացվածքն ըստ միավոր ծառայության, ինչի արդյունքում պահանջված փաստաթուղթը ներկայացվել է:

8. Գնի շուրջ բանկցությյունների վերբերյալ.

Բանկցությունները տեղի ունեցան ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 208 սենյակում 2018թ. դեկտեմբերի 14-ին–ին ժամը 10:00-ին: Բանակցություններին ներկայացել էին «Սերվիս պլյուս» ՍՊԸ-ի, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի տնօրենները:

«Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն առաջարկեց իջեցնել գինը 1000 դրամով, ևս 1000 դրամով գնի իջեցման առաջարկ արեց «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն՝ արդյունքում առաջարկելով 157760 դրամ գին:

Հ/Բ	Աշխատանքի անվանումը	Կողմնորոշիչ գին՝ կնքված նախորդ պայմանագրի գինը	Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը	Մասնակցի անունը
1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	799500	157760	-	157760	Մագիստրալ նախագիծ ՍՊԸ

8.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից բանակցությունների ժամանակ ներկայացրած գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝ **«ՍՊ-ԳՀԾՁԲ-19/1/1»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն:

8.2 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի հաջորդ աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտե հարցում ներկայացնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվեն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկը և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

6.3 Մասնակիցներին ծանուցել մրցույթի արդյունքները:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի,օրվա և ժամի վերաբերյալ.

9.1 Հաջորդ՝ **հայտերի գնահատման արդյունքների հաստատման և հրապարակման նիստը** ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի -ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետին համապատասխան տեղի կունենա ք.Երևան, Աբովյան 9 հասցեում՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները, ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝	----------	*Ռ. Գալստյան*
Անդամներ՝	----------	*Մ.Պետրոսյան*
	----------	*Ն. Բաղդասարյան*
	----------	*Գ. Քոչարյան*
	----------	*Մ. Ավագյան*
Հանձնաժողովի քարտուղար՝	----------	Մ. Պողոսյան